

տարուած չէ, մենք այսպիսի ստուգաբանութիւնները կընդունենք իրը պատահական նմանութիւններ, իսկ երբ նոքա տչք ժակելու շափէ ակներկ են, ինչպէս ձանձ, մարզարէ, լակոտ, (աւելցոցնեմ փացի, ոչխար, բազ ձիօյք, հռոի, սահմի, ևն ևն), այն ժամանակ կը համարենք նրանց իրեւ հասարակ փոխառութիւններ կամ Կովկասեան ազգերից և կամ Խալդերից, որոնց հետ հայերը դարեւ շարունակ հարեան ու քնտկակից են եղել: Եւ շատ զարմանալի կը լինէր, եթէ դարերի այս կենակցութիւնը փոխադարձ ազգեցութիւն չունենալը. եթէ վրացիք և միւս Կովկասեան լեզուները օդտուել են մեզանից լեզուով, գրականութեամբ և կրօնով, մենք էլ անշուշտ փոխադարձարար օդտուած պէտք է լինենք նոցանից զանազան փոխառութիւններով: Հայերէնը 4570 անժանօթ բառ ունի գեռ. Կովկասագէտներին կըմնայ որոշել և ստուգել, թէ սոցանից լինչքանը փոխառութիւնէ յիշեալ լեզուներից: Եւ անհունապէս շնորհակալ կըլինէիք Պրօֆ., Մառին, եթէ հրատարակելով իւր վրացական ու սեմական լեզուների համեմատական բառարանը, նպաստէր գիտութեան և մասնաւորապէս հայ լեզուաբանութեանը:

28 ապրիլի 1910 թ.

Հ. Աձառեան



IV

ԶԵՒՄԳԻՑՈՒԹԻՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԿՋԲՈՒԽՔ¹⁾.

(կարեւորութիւնը, էութիւնը, նպատակը):

Տեսանելի և շօշափելի առարկայի կատարեալ ըմբռնումը յանախ կախուած է նրա ձեռի և ձեռային յարաբերութեանց ներհայեցումից (Einsicht).

Ձեերի գիտողութեան միջոցին մեր ուշադրութիւնը պէտք է ուղղուած լինի ոչ թէ միայն այն բանի վրայ, թէ ինչո՞ւ այս մարմինը կամ նրա որ և է մասը այս ինչ ձեռ ունի, այլ և ինչո՞ւ նա այդպիսի ձե (կերպարանք) պէտք է ունենայ:

Դասաւանդութեան նկարագրական (գեսկրիպտեւ) եղանակը, որով առաջները բաւականանում էին, պատճառական մատածողութեան զարգացման համար անարդասիք է: Դիտողու-

1) Pickel, Die Geometrie der Volksschule, 1872.

թեան եղանակը պէտք է լինի ձեաբանական (մօրֆօլոգիական) և կենսաբանական, իրական (ըէալ) և դադափարական (իզէալ) տարրերը, զգայական և հոգեկան մամենաները հաւասարապէս պէտք է ուշագրութեան արժանանան, այնպէս որ, ձեերի սոսկ գիտակութեանը յաջորդէ ձեերի հասկացողութիւնը, ձեերի մտաւոր ըմբռնումը: Անհրաժեշտ է ուրեմն հետազոտել կերպարանքի և բովանդակութեան մէջ եղած փոխագարձ առընչ չութիւնը, բնութեան բազմազան երևոյթների մէջ ձեի և պաշտօնի (ֆունկցիա) ներքին և համերաշխ ներդաշնակութիւնը: «Մարմնի ձեը իւր էութեան հայելին է. եթէ թոփանցես նրա մէջ, կուժես տռեղծուածի կնիքը». Գէօթէն իրաւամը առում է «ձեը իրերի էութիւնն է», ձեը իւրեւորոյն բան չէ, սակայն նու երեան է հանում որոշ բովանդակութիւն: «Եկ առարկայի սոսկ հայեցողութիւնը պէտք է փոխուի զիտաղութեան, զիտողութիւնը՝ խորհրդաժութեան, խորհրդաժութիւնը՝ զուգորդման» (Գէօթէ):

Ա. 1) Բնական մարմնների (բոյսեր, կենդանի, մարդ) գառաւանդութեան միջոցին—համաձայն բնագիտութեան դասաւանդութեան արգի գրութեան—պէտք է ի միջի այլոց կենցազը համեմատուի մարմնի շինուածքի հետ, օրդանը առընչութեան մէջ պէտք է գրուի իր պաշտօնի նետ, պատճառի և հետեանքի կապակցութեան նկատառումով՝ աշակերտի համար պարզում է, որ էակների կազմութիւնը—այստեղ ի հարկէ այն չափով, որչափ այդ արտաքինին է լեռաբերւում—յարմարուած է բնակավայրին, շարժողութեանը, սննդառութեանը, միով բանիւ կեանքին: (գոյութեան յարմարութեան կենսաբանական օրէնքը): Աշակերտի համար սկսում է պարզուել, որ բնութեան մէջ ոչ մի ձե պատահական, դիպուածական չէ, այլ արտայայտութիւն և մարմնացումն է այն դադափարի, որ նա բովանդակում է իր մէջ՝ այսպիսով՝ աշակերտի աչքում իւրաքանչիւր բնական արարած, նոյն իսկ ամենաանշան որդը, երեւում է օրպէս մի յարաբերաբար կատարեալ օրգանիզմ, որովհետեւ նրա իւրաքանչիւր մասը իրեն յատուկ պաշտօն ունի կատարելու, որի համար և նու յարմար ձե է զգենում: աշակերտն այստեղ կտեսնի, թէ ինչպէս ամենայն ինչ կատարելութեան է ձգտում:

2) Նպատակայարմար ձեերի մի մասնա: որ տեսակը կազմում են գեղեցիկ ձեերը: ձշմարփիտ կրթիչ արուեստը սերտ կապուած է բնութեան հետ, նկարիչներն և քանդակագործ-

ները ամեն ժամանակ փոխ են առել բնութեան անհատնելի շահմարանից, գեղարուեստական գոյների և ձեւերի հարսառւթեան նախաղըիւրից: Նատ բնական մարմիններ իրենց ամբողջութեամբ և մասներով նպատակայացարմաք և միԱնոյն ժամանակ գեղեցիկ են յօրինուած. այդ պատճառով բացի ձեւերի տեղուագիտական զիտողութիւնից, որ բնական ձեւերի նպատակայարմարութիւնն աչքի առաջ ունի և շարժում է սպեկուլատիւ հետաքրքրութիւնը, պէտք է յաճախ մանկան հետաքրքրութիւնը ուղել մասների և նրանց բաղկացութեան գեղեցիկութեան վրայ, որով մնունդ կոտանայ գեղարիտական զգացմունքը: Ի հարկէ բաւական չէ միայն գեղեցիկաձև սոսկ մարմինների սոսկ հայեցողութիւնը, այլ պէտք է նաև դատողութիւններ անել ձեային գեղեցիկութեան մասին: Էսթետիկան մեզ ուսուցանում է, որ գեղեցիկ ձեր և նրա հիմքը կազմող գեղեցիկ իդէան իրար հետ այնպիսի անբաժանելի միութիւն են կազմում, ինչպէս հոգին ու մարմինը: Որովհետեւ գեղարուեստականը (Էսթետիկականը) բաղկացուած է լինում բաժանելի մասերից, էսթետիկական քննութեան միջոցին ամբողջութիւնը պէտք է մասների վերածուի: Ըմբռնելու համար, որ որեւէ բնական ձեի մասերը ոչ մի գէպօւմ այնպիսի գեղեցիկայացարմաք մասներ չեն կազմի, բացի ներկայ վիճակից, պէտք է բնական ձեի անդամները (տարրերը) պատկերացնենք մեզ այլ կերպ բաղակցուած: Զեերի էսթետիկական կշռադատութեան միջոցին տեսնում ենք, որ օրինակ մարդու, կենդանիների, տերևների, պտուղների շինուածքների մէջ համաչափութիւն կայ, ծաղիկների, պտուղների, մարդու գլխի, ջրի կաթիլի, երկնային մարմինների յօրինուածքի և շարժման մէջ կեղքոնական ձեն է իշխում, որ ուղիղ յարաբերականութիւն կայ ամբողջի և մասերի մէջ, ինչպէս այդ երեսում է բայսերի կազմութեան, գեղեցիկ կենդանիների շինուածքի մէջ. (մարդու մարմնի վերին և ներքին մասերի, ուսի, բազուկի և ձեռքի յարաբերութիւնը): Էսթետիկական այսօրինակ հետազօտութիւններով մանուկը դիւրազգած կդառնայ և ձեռք կբերէ բնութեան կշռադատութեան համար ոտոյդ չափ: Վերև ասածներից հետեւում է, որ բնագիտական գասը իր նպատակին հասնելու համար ի մէջի այլոց կանգ է առնելու նաև բնական մարմինների ձեւերի նպատակայացարմարութեան և գեղեցիկութեան վրայ. կարճ առած ձեւերի մասին պէտք է զիտողութիւններ արուեն: Մանուկը այդպիսով բնութեան բազմազան ձեւերի երեսյթների մէջ կաեսնէ մէծ օրինակարգութիւն և ձեւերի տարրերութեան մէջ անդամ կճանաչէ գլխաւոր ոկզբունքները:

Բ) Խաչ որ վերևն ասուեց ընութեան ձեւերի մասին, հեշտութեամբ կարելի է կիրառնել մարդկային աշխատանքի արգասիքների, արուեստի արտադրութիւնների նկատմամբ, որոնք գառաւանդութեան միջոցին հանդէս են գալիս. այստեղ նոյն իսկ աւելի բացորոշ է երևան գալիս 1) ձեւի կախումը առարկայի գործածութիւնից, 2) գեղեցկութեան օրէնքների դիտաւորեալ գործադրութիւնը: Արուեստական շինուածքն էլ որոշ գաղափար արտացոյտելու համար պահանջում է իրեն յարմար կերպարանք. ձեւը որոշ չափով նպատակի գաղափարի (Wecksidee) զգայաբանական պատեանն է: Այստեղ ես ոչ թէ ձեւի և ձեւերի յարաբերութեան չոր ու ցամաք նկարագրութիւնն է պահանջնառում, այլ ձեւի և բովանդակութեան ներքին առըն-

շութեան շեշտումն:

Այդ ներքին առընչութեան ըմբռնման համար անհրաժեշտ է մտանանշել ձեւի նպատակայացմարութեան վրայ, այսինքն արուեստի արտադրութիւնը (առարկան) աւելի կամ պակաս չափով իր պաշտօնին յարմար ձեւ է ունենալու, որի համար և ընութեան որոշ օրէնքներ, նոյն իսկ որոշ տեսակի նիւթ (մտերիա) պէտք է ի նկատի առնուին, որպէս զի նա գործածական ամենաբարձր արժէքը երեան հանք: Բայց միայն նպատակայացմարութեան տեսակէտը չէ, որ արուեստական առարկայի ձեւի համար չափատու (massgebend) է դառնում, այլ և մարգու գեղեցկի ճաշակը մեծապէս ազդում է ձեւերի վրայ:

Այսպիսով աշակերտը կը մը ունէ, որ մարդկային ձեռքի իւրաքանչիւր արդիւնք իր տեսակի կատարեալ է ձեւակերպուած, որ մի մարմնի ամենամեծ կատարելութիւնն այն է, որ նրա ձեւը նպատակայացմարութեան և գեղեցկութեան բոլոր պահանջներին բաւարարութիւն է տալիս և որ վերջապէս մարդը իր ստեղծագործութիւններին դիպուածաբար և սոսկ քմահահանոյքի ներքոյ չէ կերպարանք տալիս, այլ ձեւակերպութեան միջոցին երագործելի նպատակը աչքի տռաջ է ունենում և ձեւակերպութեան մօտիւները փոխ է առնում ընութեան ձեւերի անսահման հարստութիւնից *:

* Ցիշենք այստեղ մի քանի ձեւերի փոխառութիւն. Համաշափութեան (սիմետրիա) օրէնքի համեմատ, որ իշխում է ընութեան ստեղծագործութեան նպատարութեան մէջ, աշխատում են նարտարապետը, կիւսնը, կառը շինողը, ապակեգործը, նկարիչը.—Կերպուացման (zentralisation) օրէնքն են գործադրում ոսկերիչը, ժամագործը եւ ուրիշները, որոնք գեղեցիլ մեւը գործնական նպատակին են յարմարացնում.—յա-

Բնութեան և արուեստի իրերը այսօրինակ աելէօլօգիաման և էսթետիկական աեսակէտաներից մեկնարաննելով, սանի մէջ առաջ կը երենք այն կարեռը իմացութիւնը, որ ամենայն բան, որ ընութեան մէջ կայ և կատարում է, է և կատարում է մաթեմատիկական ճշմարտութիւնների համաձայն և երեսում ու շարժում է անհրաժեշտորէն տարածական ուղղութեանց որոշ ձևերի մէջ:

Մինչև այժմ առաջ ըերած հանդամանքները վերցուած էին առարկայի էութիւնից. բայց պէտք է կշռագատութեան առնել նաև մանկան հոգու ընոյթը, նրա հոգեբանութիւնը, որ մանկավարժական ամեն աշխատանքի ըեգուլատորն է: Առարկաների մասին մեր ունեցած անմշակ ու անստոյգ հայեցողութիւնները պէտք է պարզուին, ճշտուին և գառնան որոշ պատկերացումներ. բայց այդ բանին մենք չենք հասնի, եթէ չկարողանանք թափանցել, ներհայել առարկայի ձևային հանդամանքների մէջ. ձևը մարմնի որոշակի երևացող և անմիջապէս աչքի ընկնող կողմն է. ձևը, եթէ Գէօթէի խօսքերը մի անգամ էլ կրկնել կամենանք, մարմնի էութիւնն է. թէ ինչ կապակցութեան մէջ է Գէօթէն այդ խօսքերն ասել, այնքան էլ կարեռ չէ. այդ խօսքերն յարմարում են նաև տարածական ձևերին. և այդ խօսքերի ճշմարտութիւնը կզգայ իւրաքանչիւր որ, ով որ կփորձէ մէկին ներկայացնել, բացատրել մի անձանօթ, բացակայ բան: Նտապովի նկարած մի ուրուագիծ (skizza) աւելի բան է բացատրում, քան երկար ու բարակ խօսքեր: Գէօթէի պէս անձն անդամ, որ խօսքի մեծագոյն վարպետներիցն էր, իր մոքերը բացատրելու համար յաճախ գիմում է նկարչութեան օժանդակութեանը (Wahrheit und Dichtung): Բնութեան և արուեստի առարկաները և երեսոյթները ստոյգ ըմբռնելու համար հոգեբանութիւնն ուրեմն պահանջում է ի նկատի առնել այդ առարկաների ձևային հանդամանքները:

Այս երկու՝ առարկայական և հոգեբանական հիմունքները միասին հարկադրում են մեզ, իրադիտութեան սահմանում և ձևերի զիտողութիւն կատարել: Իրադիտութիւնը (բնական պատմութիւն, բնագիտութիւն, աշխարհագրութիւն, հայեցական հասերականութեան (proportionalität)) օրէնքին են կապուած կերպագործող արուեստագիտներ (ճարտարագործ, նկարիչ, բանդակագործ): Ինչպէս եւ կերպագործող արհեստաւորները (դերձակը, դարբինը, սեղանադրը, բրուտը), աշակերտը շուտով կզտնէ արուեստի շատ ճեւերի սկզբնական աղբիւրը եւ կը մը նետեւիլու է, բնութեան օրէնքնարին:

բասերականութեան (proportionalität) օրէնքին են կապուած կերպագործող արուեստագիտներ (ճարտարագործ, նկարիչ, բանդակագործ): Ինչպէս եւ կերպագործող արհեստաւորները (դերձակը, դարբինը, սեղանադրը, բրուտը), աշակերտը շուտով կզտնէ արուեստի շատ ճեւերի սկզբնական աղբիւրը եւ կը մը նետեւիլու է, բնութեան օրէնքնարին:

Նագիտութիւն) իւր առաջադրած նպատակին հասնելու համար, սկզբունք է դարձնելու, բնութեան և արուեստի առարկաների մասին խօսելիս անպայման նաև նըսնց ձեային կողմի վրայ ու շաղրութիւն դարձնել: Զեային հանդամանքների նկատառումը այսպիսով դառնում է գիգակտիկական մի սկզբանը (պըինցիա) (ինչպէս հայրենագիտաւթիւնը սրպէս սկզբանը, իրազնութիւնը որպէս սկզբունք), որ գործադրուելու է իրագիտութեան բալոր ճիւղերում:

Հետազոտութիւններ պէտք է կատարուին ուսման առաջին տարուց մինչև վերջինը. այդ պէտքում նրանք թէպէտ չեն ներկայացնի մի կապակցեալ ընթացք, շղթայուած շարք, ըայց երեան կդան առանձին առանձին, գիպուածօրէն և ցրուած. նրանք հանդէս չեն գայ իւլնուրայն, այլ միշտ օրդանապէս զուգորդուած իրազնութեան հետ, որպէս մի անբաժան մասն, անբռնազբօսիկ կերպով կապուած իրի գիտողութեանը: Մեթոդական բոլոր միշոցները, որոնք ձգտում են տեսանելի իրականութեան (ընութեան և արուեստի) ձեային հանդամանքների որոշակի ըմբռունմանը՝ կկոչուին ձեագիտութեանը որպէս սկզբունքի կամ սկզբանքային ձեագիտութեանը: Բերենք մի քանի օրինակներ, թէ ինչպէս սկզբունքային ձեագիտութիւնը գործադրուելու է իրագիտութեան զանազան ճիւղերում. (մարդաբանութիւն, կենդանաբանութիւն, քուսաբանութիւն, բնադիտութիւն, աշխարհագրութիւն):

Ա.) մարդաբանութիւն. մարդու կտրիչ ատամները ուուց են որպէս հիւսնի գուրը և յարմարուած են կտրելու գործին. ժանիքները երկար են և սուր՝ կերակուրը բռնելու և պատառառելու համար. խորդ ու բորդ սեղանատամները ծառայում են կերակուրը մանրելուն. ուրեմն ատամների ձեռ յարմարուած է իրենց պաշտօնին՝ կատարելիք գործին.՝ ականչի խխունջը, ձեռաց ափի նման, ժողովում է ձայնի ալիքները և զօրեղացնում ձայնի զգայութիւնը.՝ ողնաշարը ներկայացնումէ կրկնակի Տ—ձեի օձաղեղ. Եթէ նա ուղիղ լինէր և գըժուարաբեկ, մարմնի ծանրութիւնից, որը գէպի առաջ է ձնշում, առաջ կթեքուէր. պատկերացնենք մի ըոպէ ողնաշարը երկուստեք պարփակուած ուղղահայեաց գծերի մէջ. Երկու ուղղահայեացների մէջ գտնուող մասերը ըստ իրենց հերթի ուղղահայեաց կծանրանան ողնաշարի վրայ և այզպիսով ոյժ կան ողնաշարին. այնպէս որ նա նոյնչափ կըկարողանայ կըել, ինչ-

պէս մի ուղղահայեաց սիւն, որի հաստատութեւնը լինէր երկու ուղղահայեացների միջի տարածութեան չափ. ողնաշարի կրկնակոր ձեւը նրան ոչ միայն գիմացկուն են դարձնում, այլ և էլաստիկ. այնպէս որ այդ ձեւի շնորհիւ զգալի կերպով թուլում է դլիքն և ուղեղին հասած վնասակար հարւածների ոյժը:

Բ. Կենդանաբանութիւն.—Իւր նկուղը փորելիս խլուքքը սուս գլխով առաջն է փորում, իսկ կողքի ոտներով հողը յետալիս. նրա մազիլները այնպիսի ձեւ ունին, որ հեշտութեամբ են խըւռում հողի մէջ. որովհետեւ թաթերը լայն են, կարող են միանգամից շատ հող գուրս նետել. ուրեմն նկուղ փորելուն յարմարուած են գլխի, մազիլների ձեւը, ինչպէս և թաթերի լայնութիւնը. ստորերկրեայ կենցաղին յարմարուած է նաև նրա գլանածեւ մարմինը, որ իր բնակարանի համեմատ է և հեշտութեամբ կարող է ելումուտ անել կամ մէջը շարժուել. —Նմանապէս զարմանալի նպատակայարմաք ձեւ ունին ձկների լուղակները. նրանք թիւկի պաշտօն են կատարուած և այնչափ ներդործող են, որչափ լայն է իրենց ջուր մղելու մակարդակը. ձկան մարմնի ձեւն ևս յատկապէս յաշմարուած է ջրի կենցաղին. և մարդը նաւի ստեղծագործութեան միջոցին ընականաբար նրա մարմնի ձեւը պէտք է իրեն կազապար գարձնէր. —թռչունի կրտուցք ամուր է և կեռ՝ պատառուելու համար (գիշատիչներ), հասա, ամուր և սուր եղբներով՝ կազինը ջարդելու համար (թռութակ), բարակ և սրածայր՝ միջատներ ժողովելու համար. —Կրկնօրոճների ատամները լայն և հարթ են՝ բուսական կերակուր մարսնելու համար, մսակերներինը՝ խորտուրորդ են, միջատակերներինը՝ փոքր և սուր են (ոզնե, խլուրդ). —Փայտփորը նետաձեւ լեզուով կարող է միջատներ ծակել, եզն իր երկար լեզուով՝ խոտու ճիւղ պոկել. —Թռչնի միջավայրին խիստ յարմար է իր մարմնի, թերերի և ոսկորների ձեւը, փետուրների կերպարանքը, և զեկի ու արգելիչի (տօրմօղ) պաշտօն կատարող պոչը:

Գ. Բուսաբանութիւն.—Վարսակի ցօղունը շատ թոյլ է և անամէջ. շնայտ դրան ամուր է, որովհետեւ կոր է և ամեն կողմ հաւասարաշափ է գիմադրում. —մէծ Klapperlogt-ի? պոտկի վերին վեղաբանման շրթունքները բերմնաւորող փոշու համար պաշտպանութեան յարկ են դառնաւմ. եռմատանիք արքեկի (Saxifraga) տերեներն այնպէս են գասաւորուած, որ մէկը միւսից չի խլում արեւ և ոչ մի ճառագայթ. նրանք գէպի ներքեւ գնալով հետզհետէ սեղանում են և այդպիսով կազմում են մի նեղ խողովակ, որի մէջ ըսկած անձրւել կաթելները խնամքով արմատին են հասցնում. և որովհետեւ ցօղունի վերին տերեները

աւելի փոքր են, քան ստորինները, բնականաբար վերջիններս չեն ստուերարկում։ — Եղիճի (waldziest) ծաղկի խոզովակի մերին շրթուենքը վեղարաձեւ է և կտուրի նման ծածկում է փոշաւոթը, այսպիսով պաշտպանում է փոշին անձրեսց, ներքի շրթուերը եռալթակաւոր է և ծառայում է միջաներին հանդատեան տեղ, ուստի և մեծ է ու հօրիզոնական և այցելու մեղածանձերի համար յարմարագոյն դիրք ունի։

Տանձենու տերեւը երկար կոթ ունի և դիւրաշարժ է, ուստի և կարող է բռնել արեւի իւրաքանչիւր ճառագայթը շատ բոյսեր տաղածուելու նպատակով թռչելու յարմար յօրինուածք ունին. ուսւր արմատները հեշտութեամբ են ծակում հողը. լայն տերենները զիւրութեամբ են կլանում լոյս և օդ, միւնոյն ժամանակ առանց գֆուտարութեան գոլովշացնում են աւելորդ ջրամասերը. ջրային բոյսերը սովորաբար լայն են լինում և երեղանման, որի շնորհիւ և լողալու յարմար են. (Համեմատ. Շմայլ, Խւնգէ, Զայֆերտ, Տւիհառւդէն, Քիոլինգ և Պֆալց և ուշըեշները)։

Գ. Բնագիտութիւն. (աշխատագիտութիւն)։ Առմուրջի սիւները պէտք է մի կողմից շտա ծանրութիւն կրեն, միւս կողմից ջրի հսուանքի հարուածին ընդդիմազրութեան նուազ մակեցեացթ ցուցագրեն. դրա համար էլ նրա հիմնակամ սքեման կամ նեղ ուղղանկիւնի հատուածակողմ է լինում և կամ նեղ ձուածե, որ իւր ուսւր մասով դարձած է լինում հսուանքի դէմ. — Ի՞նչպէս է բացատրում քարէ կամարի կայունութիւնը. կամարը շինուած է լինում այնպիսի քարերից, որոնց վերին մասը աւելի լայն է, քան ներքի. գլխի քարի ծանրութիւնը վերից ուղղահայեաց ճնշում է կողքին կապուած քարերի վրայ. Եթէ կողքի քարերը կեղելի ճե չունենային, ներքեւ կմղուէին. բայց այդ ճեւի պատճառով գլխի քարը աւելի կամ պակաս չափով հօրիզոնական է ճնշում իր դրացիների վրայ, որոնք ըստ իրենց հերթի նմանապէս հօրիզոնական են ճնշում իրենց հարեանների վրայ և այդպիսով վերջ և վերջոյ ամբողջ ուժը ծանրանում է սիւների վրայ։ — Նոդեշարժ մեքենան երկար կաթսա, մեծ մղիչ (Treibrad) և մի կարճ ցիլինդր է ունենում, որոնց շնորհիւ մղիչը երթ ու դալն արագանում է և ամեն շրջման միջոցին շոգեշարժն անցնում է մեծ աարածութիւն. բեռնամբարձ մեքենան, ընդհակառակը, հաստ կաթսայ, հաւասար ու փոքր սիւներ և երկար ցիլինդր է ունենում. այդպիսով այս մեքենայի առաւելութիւն է գառնում աշխատանքի մեծ ոյժ, իսկ պակասութիւնը՝ դանդաղ շարժու-

զութիւն. ուրեմն միանգամայն համապտտասխանում է եր պաշտօնին:—Երկաթուղու գիծը (ուելսերը) նոյնպէս նպատակայարմար ձեւ ունի. հիմքը լայն է, որի շնորհիւ գիծը կայուն՝ հաստատուն է գառնում, միջին մասը (մարմինը) նեղ է, զրանով էլ նիւթն (մատերեալ) է խնայում, իսկ գլուխ լայնութիւնը երաշխաւորումէ դնացքի ապահովութիւնը: Եւ այսպէս անսահման օրինակներ կարելի է բերել*:

Թերեւս ընագէտներն ասեն, որ ընագիտական իրողութիւնների այդպիսի (ձևի տեսակէտից) գիտողութեւնը պակառուոր կլինէր, որովհետեւ այդ գէպըում ընութեան մարմինների և արուեստի առարկաների և նրանց մասերի ձեր չէ, որ ըստ ինքեան գիտողութեանն է արժանանում՝ չափում, հաշում՝ կազմ առած, այդ եղանակը գիտնական երկրաչափական չէ: Ընագիտական գասը կարող էլ չէ այդքան առաջ գնալ. նա ձևային հանգամանքները այդ չափով պէտք է պարզաբանէ, ողջափ այդ կարեոր է ընագիտական իրողութիւնների պարզ ըմբռնման համար. երկրորդ, այստեղ կարեորն այնքան էլ այն չէ, որ աշակերտը ընութեան և արուեստի առարկանների ձևային հանգամանքները ճանաչէ, այլ այն, որ նա զրանից եղրակացութիւններ և հետեւութիւններ հանել կարողանայ:

Շարունակելի.

Ա. Օլբեցեան

* Երկրացիտութիւնն էլ (աշխարհագրութիւն) ուրեմն օֆիար է երրեմն երրեմն մերի վրայ ու շաղրաւթիւն գարծնէ. Ավիպտոսն, օրինակ՝ շեղականի ձև ունի. Սարգինիա կղզին շեղանման է. Միցիլիան՝ եռանկիւնի. Բարիանեան Թերակղզին ներկայացնում է հաւասարակողմ եռանկիւնի, որի սուր ծայրը հարաւ է զարծած. Մէծն Բրիտանիան հաւասարասրունդ եռանկիւնի է. Երբուան եռանկիւնածիւ մարմին է՝ բացմանը անդամներով: Հիւսիսային եւ հարաւային Ամերիկան ուղղանկիւն եռանկիւնիներ են, որոնց ուղիղ անկիւնը զարծած է արեւելքը. սուր ծայրը հարաւ, իսկ երկար կողմը նայում է արեւմուար. Հնդկատանը, Աննա Թերակղզին եւ Աֆրիկան եռանկիւններ են՝ սուր ծայրով հարաւ զարծած.—Քօրնէօյի հիմնական ձեւը նինդանկիւնի է.—Աւստրալիա մայր ցամարի հիմնական ձեւը անդանն զեցանկիւնի է.—Երանը եւ Պիրինեան Թերակղզին սեղանաձեւ են. ի հարկէ պէտք է խուսափել մերի պատճառը որոնելուց կամ ապացուցանելուց: